




Մայր Եկեղեցի Օռեանայ:

Վաղղիոյ երեւելագոյն մայր եկեղեցեաց մէջ արժանաւորապէս առաջինն ենքն մէկը կը սեպուի () ուլեանայ մայր եկեղեցին, որ Թերեւս Սէմի, Բաւրիւս եւ Սղրազպուրկի մայր եկեղեցեաց այն վեհօթիւնը չունի, բայց գեղեցկութեան կողմանէ մէկալ իրենքն

ալ կը գերազանցէ. անոր համար արժան կը համարինք վրան համառօտ տեղեկութիւն մը տալ հոս բանասէր ընթերցողաց:

() ուլեան, Սուառէ գաւառին գլխաւոր քաղաքը, ինչպէս ուրիշ գեղեցիկ յատկութեանց մէջ բարգաւաճ է, նը-

մանապէս ալ զուրկ չէ այնպիսի շէնքերէ , որոնց մէջ ճարտարապետութիւնը իր կատարելութիւնները փայլեցուցած ըլլայ . ասոնց գլխաւորներն են Հասարակաց ժողովարանը , Սուառ գետին վրայ ձգուած Սամուրը , և այլն . բայց ասոնց մէջ առաջին տեղին ունի Սայր եկեղեցին՝ գոթացի ճարտարապետութեամբ : Բայ եկեղեցւոյն սկիզբը հին ու անծանօթ է . բայց այս ստոյգ է որ Վաղղիոյ գրեթէ ամէն մայր եկեղեցեաց պէս՝ ասոր ալ շինուածքը ետքէն նորոգուած է : Վաղղիոյ ընդհանուր եկեղեցիներուն վրայ ըսածնիս այնչափ ստուգութիւն ունի , որ գաղղիացի մը կ'ըսէ թէ “ Սիր եկեղեցեաց արժանաւոր հնութեանը վրայ խօսելու ատեն՝ անոնց դրքին վրայ միայն խօսելու է ” :

Վաղղիոյ թագաւորները միշտ () ուլէանի մայր եկեղեցւոյն վրայ մեծ խնամք ու հոգ ունեցեր են , և իրենց գանձէն շատ օգնութիւն ըրած են անոր շինութեանցն ու նորոգութեանցը , հովուաց ու հաւատացելոց ջանիցը նըպաստելով . 'ի վերայ այսր ամենայնի՝ ինչուան հիմա անկատար մնացած է եկեղեցին : () արմանալի բան մըն է թէ ինչպէս եկեղեցւոյս ճարտարապետները , որ իրարու յաջորդեցին , ամենեւին ջանացած չեն յատկագիծը փոխելու և իրենց մտացը այլ և այլ ախորժակին յարմար շինելու , որով շէնքին գեղեցկութիւնը ամբողջ ու անարատ պահուած է :

Ռոպէրդ տը Վուրդընէ անունով () ուլէանի եպիսկոպոսը իր իշխանութեանը ժամանակ շատ մեծ պատրաստութիւններ տեսաւ եկեղեցւոյս շինութեանը համար . բայց գործոյն սկիզբը չդրած՝ մահը վրայ հասաւ : Իրեն յաջորդեց Սիլվ () ասդէ , որ 1287ին Սեպտեմբերի 11ին եկեղեցւոյս հիմնարկութեան առաջին քարը դրաւ : 1567ին Վաղղիոյ կրօնի պատերազմաց ժամանակը՝ նորաղանդները գիշեր ատեն մտան եկեղեցին , ու ական դրին չորս կամարակապ սիւններուն տակ , որոնց վրայ շինուած էր մեծ զանգակատունը :

Բայ զանգակատունը , որ 324 ոտք բարձրութիւն ունէր , և ծայրը խաչաբարձ գունտ մը կար , որուն համար կ'ըսէին թէ մեծ ծանրութիւն ունէր , երկրորդ օրը վառօդը բռնկելով կործանեցաւ , ու եկեղեցւոյն շէնքին վրայ իյնալով՝ անոր մէկ մասը ճմլեց իր ծանրութեամբը ու քանդեց : Տասուիրեք տարի ետքը Հենրիկոս Գ ու դիւիոյ մայրը հրաման տուին և ամենէն աւելի հարկաւոր նորոգութիւնները սկսել տուին : Իսկ 1595ին Սլեմէս Բ քահանայապետը երբոր արձակեց նզովքէ Վաղղիոյ Հենրիկոս Գ թագաւորը , անոր վրան պարտք դրաւ () ուլէանի մայր եկեղեցին նորէն կառուցանելու . անոր համար Հենրիկոս ալ 1601 տարւոյն շէնքը սկսել տուաւ . այսպէս կ'աւանդեն Վաղղիացիք :

Եկեղեցւոյս շէնքին երկայնութիւնը 456 ոտք է , իսկ լայնութիւնը 165 ոտք : Երբքին կողմը փառահեղ տեսք ունի , և միանգամայն շատ գեղեցիկ է՝ զարդերուն բազմութեանն ու փափկութեանը համար , որոնք նկարակերտ կ'երևնան : Սեծ դուռը հանդերձ իր ճակատովն ու աշտարակներովը առնելով՝ զարմանալի տեսարան մը կը բանայ աչքիդ առջևը . և այս աշտարակները , որոնք լուսամուտներով են , պերճութեամբ ու ճոխութեամբ մը բարձրացած են : Բայսպիսի գեղեցիկ շէնքի մը մեծ պակսութիւն մը այն է՝ որ չունի իրեն առջևը իրեն յարմար փառաւոր հրապարակ մը :